ԱՐՄԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հայցորդ

ԱՎԻԱՑԻՈՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Հոդվածում քննարկվում են ավիացիոն անվտանգության ապահովման հիմնախնդիրները քաղաքացիական ավիացիայի համակարգում: Հոդվածի շրջանակներում համապարփակ անդրադարձ է կատարվում ավիացիոն անվտանգության ապահովման հիմնախնդիրներին:

Հիմնաբառեր- *միջազգային քաղաքացիական ավիացիա, Միջազգային քաղաքացիական ավիացիայի կազմակերպություն, միջազգային օդային փոխադրումներ, օդային երթևեկության սպասարկում, միջազգային օդային իրավունք:*

Միջազգային օդային փոխադրումների իրավական կարգավորման հիմքերը դրվեցին Երկրորդ աշխարհամարտից հետո, երբ ողջ աշխարհում նկատվեց քաղաքացիական ավիացիայի բուռն զարգացում, իսկ միջազգային թռիչքների իրականացումը պահանջում էր իրավական հստակ ձևակերպումներ և կարիք առաջացավ կանոնակարգել միջազգային օդային փոխադրումները:

1944 թվականին ընդունվեց «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» Կոնվենցիան (Չիկագո, 1944թ.), որը կարևոր դեր ունեցավ միջազգային օդային փոխադրումների կանոնակարգման գործում: Չիկագոյի կոնվեցիայի հիմքի վրա ստեղծվեց նաև Միջազգային քաղաքացիական ավիացիայի կազմակերպությունը (ԻԿԱՕ), որը Միավորված ազգերի կազմակերպության մասնագիտացված հաստատություն է: Միջազգային քաղաքացիական ավիացիայի կազմակերպության կանոնադրական նպատակն էր ապահովել միջազգային քաղաքացիական անվտանգ զարգացումը և կոորդինացնել քաղաքացիական ավիացիայի բնագավառում միջազգային համագործակցությունը: Ահա այս խնդիրների իրականացման, ինչպես նաև քաղաքացիական ավիացիայի անխափան և արդյունավետ գործունեության, անվտանգության ապահովման և զարգացման նպատակով ԻԿԱՕ-ն սահմանեց քաղաքացիական ավիացիայի աշխատանքները կանոնակարգող միջազգային նորմեր ու ստանդարտները:

Միջազգային քաղաքացիական ավիացիայի կազմակերպության (ԻԿԱՕ) ստեղծման պահից քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության ապահովման հարցերը մշտապես գտնվել են այդ կազմակերպության ուշադրության կենտրոնում: Ինչպես նշում է Մ.Դ. Թովմասյանը «Միջազգային քաղաքացիական ավիացիայի կազմկերպության մասին» Կոնվեցիան միջազգային օդային իրավունքի հիմնական փաստաթուղթն է»[1]:

Քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության ապահովման միջազգային-իրավական կարգավորման հիմնական փաստաթուղթը Միջազգային քաղաքացիական ավիացիայի կազմակերպության կողմից Կոնվեցիան է և այդ Կոնվենցիայի Հավելվածներով ընդունված քաղաքացիական ավիացիայի աշխատանքները կանոնակարգող ավիացիոն ստանդարտներն են, որոնք հիմք են հանդիսացել նաև ավիացիոն անվտանգության ապահովման ոլորտում տարբեր երկրների կողմից ազգային չափանիշների ու պահանջների մշակման և ընդունման համար: Ներկայումս Միջազգային քաղաքացիական ավիացիայի կազմակերպությանը անդամակցում է ՄԱԿ-ի անդամ 199 երկիր, Միջազգային քաղաքացիական ավիացիայի կազմակերպության կողմից սահմանված ավիացիոն անվտանգության ստանդարտները բոլոր անդամ երկրների համար ենթակա են պարտադիր կատարման և ավիացիոն անվտանգության ազգային նորմերի ու պահանջների սահմանման համար հիմնական աղբյուրն են:

Միջազգային քաղաքացիական ավիացիայի կոնվենցիային կից Հավելվածները Կոնվենցիայի բաղկացուցիչ մասն են կազմում և ընդգրկում են միջազգային քաղաքացիական ավիացիայի համակարգի բոլոր ոլորտները: Հավելվածները թվով 19-ն են, սակայն ավիացիոն անվտանգության ապահովման հիմնական ստանդարտերը սահմանող Հավելվածը՝ «Անվտանգություն, քաղաքացիական ավիացիայի պաշտպանությունը անօրինական միջամտության ակտերից» թիվ 17-րդ Հավելվածն է: Միաժամանակ ավիացիոն անվտանգության մասով դրույթներ են պարունակում թիվ 6-րդ՝ «Օդա-

նավերի շահագործում» Հավելվածում, թիվ 9-րդ՝ «Ընթացակարգերի պարզեցում» Հավելվածում, թիվ 11-րդ՝ «Օդային երթևեկության սպասարկում» Հավելվածում և թիվ 18-րդ՝ «Օդով վտանգավոր բեռների անվտանգ փոխադրում» Հավելվածում:

Չնայած այն հանգամանքին, որ Միջազգային քաղաքացիական ավիացիայի կազմակերպության մասին Չիկագոյի կոնվենցիայի ընդունումը հնարավորություն տվեց անդամ երկրներին կանոնակարգել միջազգային քաղաքացիական ավիացիայի համակարգի գործունեությունը, ապահովել ավիացիոն անվտանգության աշխատանքների իրականացումը, քաղաքացիական ավիացիայի անխափան գործունեությունն ու արդյունավետ զարգացումը, քաղաքացիական ավիացիայի դեմ ուղղված անօրինական միջամտության գործողությունները շարունակվում էին տեղի ունենալ:

Քաղաքացիական ավիացիան համաշխարհային տնտեսության զարգացման մեջ կարևոր դեր ունի և առանց քաղաքացիական ավիացիայի լիարժեք և հուսալի անվտանգության ապահովման՝ քաղաքացիական ավիացիայի հետագա զարգացումն անհնարին կդառնար, հնարավոր չէր լինի ապահովել օդային տրանսպորտով մարդկանց և բեռների արագ ու անխափան փոխադրումները, ապահովել տարբեր երկրների միջև անվտանգ օդային կապը: Հաշվի առնելով այս հանգամանքը, Միջազգային քաղաքացիական ավիացիայի կազմակերպությունը և անդամ երկրները սկսեցին զգալի ուշադրություն հատկացնել քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության ապահովմանը:

Միջազգային հանրության կողմից առաջին միջազգային պայմանագրերի ընդունումը, որոնք անմիջապես կապ ունեն քաղաքացիական ավիացիայի գործունեության դեմ ուղղված անօրինական միջամտությունների ակտերի դեմ պայքարի հետ, վերաբերում են 20-րդ դարի 60-70-ական թվականներին, ինչը կապված է նախ և առաջ այդ շրջանում անօրինական միջամտությունների ակտերի թվաքանակի կտրուկ աճի հետ, երբ հանցավոր ոտնձգության օբյեկտ դարձան գրեթե բոլոր ավիացիոն գերտերությունների օդանավերը:

Նշված միջազգային պայմանագրերից են՝

1) «Օդանավերում կատարված հանցագործությունների ու մի շարք այլ ակտերի մասին» Կոնվենցիա (Տոկիոյի կոնվենցիա), որին Հայաստանի Հանրապետությունը միացել է 1994 թվականի մարտի 29-ի ՀՀ Գերագույն խորհրդի որոշումով,

2) «Օդանավերի անօրինական բռնագրավման դեմ պայքարի մասին» Կոնվենցիա (Հաագայի կոնվենցիա), որին Հայաստանի Հանրապետությունը միացել է 1994 թվականի մարտի 29-ի ՀՀ Գերագույն խորհրդի որոշումով,

3) «Քաղաքացիական ավիացիայի անվտանգության դեմ ուղղված ապօրինի գործողությունների դեմ պայքարի մասին» Կոնվենցիա (Մոնրեալի կոնվենցիա) և «Միջազգային օդանավակայաններում բռնության անօրինական ձեռնարկումների դեմ պայքարի մասին» Մոնրեալի կոնվենցիային կից արձանագրությունը, որոնց Հայաստանի Հանրապետությունը միացել է 1996 թվականի հոկտեմբերի 8-ի ՀՀ Գերագույն խորհրդի որոշումով,

4) «Պլաստիկ պայթուցիկ նյութերի հայտնաբերման նպատակով դրանց դրոշմավորման մասին» Կոնվենցիա և կից հայտարարություն, Հայաստանի Հանրապետությունը միացել է 2005 թվականի մարտի 21-ի ՀՀ Ազգային ժողովի որոշումով,

5) «Միջազգային քաղավիացիայի նկատմամբ անօրինական ակտերի դեմ պայքարի մասին» Կոնվենցիա (Պեկինի կոնվենցիա):

6) Պեկինի արձանագրություն, որը լրացնում է «Օդանավերի անօրինական զավթման դեմ պայքարի մասին» Հաագայի կոնվենցիան:

Հայաստանի Հանրապետությունը դեռևս չի միացել «Միջազգային քաղաքացիական ավիացիայի նկատմամբ անօրինական ակտերի դեմ պայքարի մասին» կոնվենցիային (Պեկինի կոնվենցիա) և Պեկինի արձանագրությանը, սակայն վերը նշված փաստաթղթերին միանալու համար անհրաժեշտ աշխատանքները տարվել են և այժմ դրանք գտնվում են ավարտական փուլում:

«Միջազգային քաղաքացիական ավիացիայի կազմակերպության մասին» Կոնվենցիան և այդ Կոնվենցիային կից Հավելվածներ հիմք են հանդիսացել նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի համակարգի նորմատիվ իրավական համակարգի մշակման, ստեղծման և քաղաքացիական ավիացիայի համակարգի օրենսդրական կարգավորման համար:

Հայաստանի Հանրապետությունն անդամակցել է Միջազգային քաղաքացիական ավիացիայի կազմակերպության 1993 թվականի մարտի 29-ին և ակտիվորեն ներգրավված է ԻԿԱՕ շրջանակներում կատարվող բոլոր աշխատանքներում: Մասնավորապես մշակվել և ընդունվել է «Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, ընդունվել են քաղաքացիական ավիացիայի համակարգի տարբեր ոլորտները կանոնակարգող թվով 86 նորմատիվ իրավական փաստաթղթեր, որոնցից 50-ը հաստատվել են Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումներով, իսկ 36-ը քաղաքացիական ավիա-

ցիայի լիազոր մարմնի ղեկավարի հրամաններով:

Անկասկած, վերը թվարկած կոնվենցիաները, որոնք ընդունվել են 20-րդ դարի 60-70-ականներին ու վավերացվել ԻԿԱՕ անդամ պետությունների մեծամասնության կողմից, կարևորագույն դրական դեր ունենցան Միջազգային քաղաքացիական ավիացիայի, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի բնագավառի անխափան ու անվտանգ գործունեության ապահովման աշխատանքներում և հնարավորություն տվեցին լիարժեք ապահովելու քաղաքացիական ավիացիայի զարգացումն ու արդյունավետ գործունեությունը և իրականացնելու ուղևորների և բեռների անվտանգ օդային փոխադրումներ:

[1] Товмасян М.Д. Чикагская конвенция 1944 г. о международной гражданской авиации: изменения назрели // Право и политика. 2001. N 11. С. 104.

Арсен Погосян
Соискатель академии государственного управления РА

РЕЗЮМЕ

Обеспечение основополагающих принципов авиационной безопасности в системе международной гражданской авиации

В статье рассматриваются вопросы авиационной безопасности в системе гражданской авиации. В рамках статьи рассматриваются вопросы комплексной авиационной безопасности.

Ключевые слова *- международная гражданская авиация, Международная организация гражданской авиации, международные авиаперевозки, обслуживание воздушного движения, международное воздушное право.*

Arsen Poghosyan
Applicant at the Public Administration
Academy of the Republic of Armenia

SUMMARY

Provision of basic principles of aviation security in the system of international civil aviation

The article deals with aviation security in the civil aviation system. Within the framework of the article, issues of complex aviation security are considered.

Key words: *International Civil Aviation, International Civil Aviation Organization, International air transportation, air traffic service, Aviation law.*